ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հայաստանը, սկսած վաղնջական ժամանակներից, ունեցել է թանգարանային այնպիսի հարուստ հաստատություններ, ինչպիսիք հնում ունեցել են առաջավոր երկրները, բայց դրանք չեն հարատևել քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով[1]։ Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ միջնադարյան Հայաստանում գոյություն են ունեցել արքունական, եկեղեցական և իշխանական տներին կից թանգարաններ, որոնք բոլորն էլ ավարի և կաշառակերության զոհ են դարձել։ Նոր ժամանակներում Հայաստանը պետականություն չուներ, հետևապես և թանգարաններ չէր կարող ունենալ։ Այժմ գոյություն ունեցող բոլոր թանգարանները (բացի Էջմիածնի եկեղեցական թանգարանից) հիմնադրվել են սովետական իշխանության օրոք։

Սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Հայաստանի հեղկոմը հետաքրքրվեց բանվորա-գյուղացիական պետության կուլտուրական ժառանգության հարցերով և ընդունեց Լուսժողկոմի ներկայացրած դեկրետը՝ ՀԽՍՀ մեջ գտնվող բոլոր ազգությունների հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանները և տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով պետական սեփականություն համարվելու և Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տնօրինությանը փոխանցվելու մասին[2]։ Իրականում Հայաստանում միայն մի թանգարան կար, դա Էջմիածնի թանգարանն էր, որը և պետականացվեց։ Էջմիածնի եկեղեցական թանգարանը մնաց վանքին և մինչև այսօր էլ վանքի տրամադրության տակ է։ Այդ դեկրետով պետականացվեց նաև Մատենադարանը։

Պետականացվելուց հետո թանգարանը կոչվեց Վաղարշապատի հնագիտական-ազգագրական թանգարան, *որը թեև առանձին հիմնարկություն էր Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ենթակայության ներքո, բայց աշխատակիցների առանձին հաստիքներ և բյուջե չուներ։ Մատենադարանի տնօրենը միաժամանակ թանգարանի դիրեկտորն էր։ Թանգարանում որևէ գիտական աշխատանք չէր տարվում, բայց Մատենադարանի աշխատակիցները երբեմն-երբեմն պատահականորեն բացված դամբարաններում և այլ հնավայրերում պեղումներ կամ լրացուցիչ ուսումնասիրություններ էին կատարում և գտնված առարկաները տեղափոխում թանգարան։ Սակայն Էջմիածնի այդ*

---

1 *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 10, էջ 20—35։*

2 *Հայաստանի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 122, գ. 791, թ. 5, նաև Շ. Հարությունյան, Սովետական Հայաստանը 40 տարում, Երևան, 1960, էջ 63։*

թանգարանը չէր կարող հիմք հանդիսանալ Հայաստանի պետական թանգարանի ստեղծման համար, որովհետև այն մայրաքաղաքում չէր գտնվում և ուներ միակողմանի բնույթ։ Ճիշտ է, հնագիտական և ազգագրական նյութերի թիվը բավական մեծ էր, բայց դրանք հիմնականում եկեղեցական իրեր էին՝ կապված էջմիածնի վանքի հետ։

Վաղարշապատի թանգարանի կողքին անհրաժեշտ էր հիմնադրել պետական թանգարան Երևանում։ Այդ էր պատճառը, որ 1921 թ. ապրիլի 21-ին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, Հայաստանի կենտրոնական թանգարանի հիմնադրումը նախապատրաստելու նպատակով, հրաման արձակեց Սովետական Հայաստանի գավառներում երկրագիտական թանգարաններ հիմնելու մասին։ Սակայն այդ հրամանը հնարավոր չեղավ իրագործել, որովհետև հոշոտված ու սովատանջ Հայաստանն առաջին հերթին դեռ իր վերքերը պետք է բուժեր։

Այնուամենայնիվ, վերոհիշյալ հրամանը ցույց է տալիս, որ սովետական իշխանության հաստատման հենց առաջին օրերից թանգարանային գործը Հայաստանի ղեկավար մարմինների ուշադրության կենտրոնում է եղել։ Թեև այդ հրամանը բեկում չմտցրեց թանգարանային գործի մեջ, սակայն Լուսժողկոմատի մյուս քայլերը արդյունավետ եղան, և նույն թվականի հոկտեմբերին Երևանում հիմնադրվեց Հայաստանի կենտրոնական կուլտուր-պատմական թանգարանը։

Այդ տեղի ունեցավ հետևյալ պայմաններում. 1921 թ. հուլիսի 19-ին Երևանի բանվորական տան դահլիճում (ներկայիս Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում) բացվեց հայ արվեստագետների առաջին ցուցահանդեսը[3], որը կազմակերպել էին Թբիլիսիի հայ նկարիչների միության անդամները։ Ցուցահանդեսին մասնակցում էին նաև Երևանի նկարիչները։ Ցուցադրված նկարների մի մասը պետությունը գնեց՝ Երևանում հիմնադրվելիք թանգարանի համար։

1921 թ. հոկտեմբերի 19-ին Լուսժողկոմատին կից հիմնադրվեց Հնություններ և գեղարվեստի պահպանման կոմիտե[4], որը զբաղվելու էր ոչ թե Հայաստանի պատմահնագիտական և ճարտարապետական հուշարձանների պահպանությամբ, այլ առաջին հերթին պետք է հավաքեր ու ցուցադրեր թանգարանային առարկաներ՝ պեղածո նյութեր, յուղաներկ պատկերներ և այլն։ Կոմիտեի նախագահ էր նշանակվել Մարտիրոս Սարյանը, քարտուղար՝ Աշխարհբեկ Քալանթարը, իսկ կոլեգիայի անդամներ՝ Երվանդ Լալայանը և Եղիշե Թադևոսյանը։ Նախապատրաստական աշխատանքը կատարվում էր Լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի անմիջական մասնակցությամբ[5]։

Կոմիտեի տնօրինությանը հանձնվեցին Թբիլիսիի հայ նկարիչների միության անդամներից և Երևանի նկարիչներից պետության գնած նկարները, որ մինչ այդ նկարիչ Վրթ. Ախիկյանին էին հանձնվել ի պահ։ Կոմիտեին հատկացվեց այն ժամանակ դեռևս թերակառույց կուլտուրայի տան առաջին հարկի (այժմյան Աբովյան և Սպանդարյան փողոցների անկյան) սենյակներից

3 «Կարմիր աստղ», 30. VI. 1921։

4 «Խորհրդային Հայաստան», 31. XII. 1921։

5 Կոմիտեի կազմակերպման մասին տե՛ս նաև Շ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 100։

մեկը, որը և՛ գրասենյակ էր, և՛ թանգարանային ժողովածուների պահեստ։ Մարտիրոս Սարյանն ինքն էր հավաքում պետական հիմնարկներում և հասարակական կազմակերպություններում գտնվող թանգարանային առարկաները՝ յուղաներկ նկարներ, ձեռագիր գրքեր, հին դրամներ, զարդեր և այլն, ինչպես նաև մասնավոր մարդկանցից գնում էր թանգարանի համար անհրաժեշտ իրեր։

Այսպիսով, Լուսժողկոմի 1921 թ. հոկտեմբերի 19-ի Հնությունների և գեղարվեստի պահպանման կոմիտե ստեղծելու վերաբերյալ հրամանը հիմք ծառայեց պետական թանգարանի համար նյութեր հավաքելուն և թանգարանային արժեքները կենտրոնացնելուն։

1921 թ. Ե. Լալայանը Թբիլիսիից Երևան փոխադրեց հայոց ազգագրական ընկերության թանգարանին պատկանող մի քանի արկղ իրերը։ 1921—1922 թթ. ձմռանը Աշխ. Քալանթարը գործուղվեց Թբիլիսի և Վրաստանի թանգարանից Երևան տեղափոխեց Մշո Առաքելոց վանքի դուռը և այլ առարկաներ, իսկ Վասպուրականից տարված սեպագիր արձանագրությունները մնացին Վրաստանում։ Նույն ձմռանը Ե. Լալայանը Հայաստանի կառավարության միջնորդությամբ Թբիլիսիից բերեց Կովկասի հայոց ազգագրական ընկերության թանգարանն իր ամբողջ գույքով ու կահույքով, ինչպես նաև նույն ընկերության կովկասագիտական-մարդաբանական հարուստ գրադարանը, որի մեծագույն մասը Ե. Լալայանի անձնական նվերն էր ազգագրական ընկերությանը[6]։

1922 թ. թանգարանի տնօրեն նշանակվեց Ե. Լալայանը։ Այդ ժամանակ թեև կար Հնությունների և գեղարվեստի պահպանման կոմիտեն, որ արդեն թանգարանային խորհրդի էր վերածվել, բայց այն ընդհանուր կերպով էր ղեկավարում թանգարանի գործերը, իսկ նրա որոշումներն ու ցուցումները գործադրում էր Ե. Լալայանը։ Թանգարանային խորհրդի նիստերը ղեկավարում էր Լուսժողկոմի տեղակալը կամ Լուսժողկոմի ներկայացուցիչ Մ. Սարյանը։

1922 թ. մայիսի 13-ին Մոսկվայից ստացվեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ապահովության համար Էջմիածնից Մոսկվա ուղարկված թանգարանային իրերը և Լազարյան ճեմարանի թանգարանային ժողովածուները՝ հին դրամներ, ձեռագիր գրքեր, գեղարվեստական նկարներ[7]։ Ձեռագիր գրքերի մեջ էր հայերեն հնագույն թվակիր գրչագիրը՝ Լազարյան ավետարանը։

Թանգարանի հարստացմանը նպաստեցին նաև պատմաբան-բանասեր Երվանդ Շահազիզի 1922 թ. հուլիսին Նոր Նախիջևանից Երևան տեղափոխած ժողովածուները, որոնք հարուստ նյութեր էին պարունակում տեղի հայկական գաղութի պատմության վերաբերյալ։ Այդ նյութերի շնորհիվ թանգարանում կազմակերպվեց պատմագրական բաժին, որի վարիչ նշանակվեց Երվանդ Շահազիզը։ Այդ բաժնում կենտրոնացվեցին Սմբատ Տեր-Ավետիսյանի 1915—1916 թթ. Արևմտյան Հայաստանից բերած 1300-ից ավելի հայերեն հին գրչագրերը, որոնք գլխավորապես հավաքվել էին Վասպուրականի և Կարնո շրջաններից։ Տեր-Ավետիսյանն էր բերել նաև Մշո Առաքելոց վանքի քանդակազարդ դուռը, որ փայտի վարպետության մի գլուխգործոց է։ Պատմագրական բաժինը ձեռք բերեց հայ գրողների դիվաններ, թատրոնի պատմության վերաբերյալ նյութեր ու լուսանկարներ։

---

6 Այս գրադարանն ուներ մոտ 20.000 անուն գիրք, որ հետագայում գրեթե ամբողջությամբ հանձնվեց Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանին։

7 Լազարյան ճեմարանից ստացվել էին 140 արկղ իրեր («Խորհրդային Հայաստան», 13. III. 1922)։

Այսպիսով, Հայաստանի պետական թանգարանը պաշտոնապես ճանաչման նախօրեին իր տրամադրության տակ ուներ հնագիտական, ազգագրական, պատմագրական և գեղարվեստական որոշ ժողովածուներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ թանգարանի չորս բաժինների ստեղծման համար։

1922 թ. թանգարանի կազմում ստեղծվեց նաև տնայնագործական բաժին, որտեղ հավաքվեցին արհեստավորական արտադրանքի բազմաթիվ առարկաներ՝ գորգեր, Հայտնարկոոպի արհեստանոցների գործած վտորեղեններ, երեսսրբիչներ, ոսկյա և արծաթյա իրեր ու զարդեր։ Այդ առարկաների քանակը շատ արագ մեծացավ և գերազանցեց թանգարանի մյուս բոլոր իրերի թիվը։ Հավանաբար այդ էր պատճառը, որ տնայնագործական բաժինը շուտով բաժանվեց երկու մասի։ Այն բոլոր ժողովածուները, որոնք ազգագրական բնույթ ունեին, հանձնվեցին ազգագրական բաժնին, իսկ տնայնագործական իրերի հիման վրա կազմակերպվեց մի նոր, ինքնուրույն թանգարան, որն սկզբում կոչվում էր Հայաստանի տնայնագործական թանգարան, իսկ 1926 թ. սկսած՝ ՀՍՍՀ տեխնիկա-տնտեսագիտական թանգարան[8]։

Հայաստանի թանգարանի պաշտոնական ճանաչումը տեղի ունեցավ 1922 թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 5-րդ տարեդարձի օրը և ստացավ «Հայաստանի պետական կենտրոնական թանգարան» անունը։ Նրա կազմում կային չորս բաժիններ՝ ազգագրական, հնագիտական, գեղարվեստական և պատմագրական։

1. Ազգագրական բաժինը սկզբից ևեթ զգալի թվով նյութեր ուներ և մինչև 1930 թ. դեռևս շարունակվում էր համալրվել տարբեր հիմնարկներից ստացվող առարկաներով։ Այս բաժինը կազմակերպվել էր, ինչպես արդեն ասացինք, Կովկասի հայոց ազգագրական ընկերության թանգարանից ստացված ժողովածուների հիման վրա։ Սակայն այդ ընկերության նյութերը մեծ մասամբ պատահական բնույթ էին կրում և արդյունք էին նվիրատվությունների։

1929—1931 թթ. թանգարանը Վաղարշապատի ազգագրական-հնագիտական թանգարանից ստացավ արևմտահայերի (Մուշ, Սասուն, Վան, Ալաշկերտ, Տարոն և այլն) զգեստների հարդարանքի բազմաթիվ նմուշներ, բայց դրանք ևս լիարժեք չէին՝ գաղթականներից ձեռք բերված այդ առարկաները ճիշտ չգրանցվելու, շատերի ծագումն անհայտ լինելու և այլ թերությունների պատճառով։

Ազգագրական ընկերության թանգարանից բերված հին զենքերի ժողովածուն ևս բավական ստվար էր, բայց դարձյալ մեծ մասամբ արժեքազուրկ։ Զենքերը ազգագրական ընկերությանն էին անցել Մանթաշյանների և Մելիք-Ազարյանների ընտանիքներից. դրանց գիտական արժեքը ևս ցածր էր, որովհետև շատերի ծագումն անհայտ էր, իսկ մի մասն էլ Հայաստանի ու հայերի

---

8 Տեխնիկա-տնտեսագիտական թանգարանն առաջին անգամ ընդարձակ ցուցահանդես կազմակերպեց 1925 թ. աշնանը, որ նվիրված էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 8-րդ և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձին։ Հետագայում նման ցուցահանդեսներ կազմակերպվեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատման 10 և 15-ամյակների առթիվ՝ 1930 և 1935 թթ.։ Այնուհետև այդ թանգարանը լուծարքի ենթարկվեց և նրա դերը ժամանակավորապես հանձնվեց պատմության թանգարանին, մինչև որ 1957 թ. ժողովրդական անտեսության նվաճումների ցուցադրության համար հատուկ շենք կառուցվեց։

հետ առնչություն չուներ։ Կային նույնիսկ դեկորատիվ զենքի և զրահի տեսակներ։

Հայտնարկոոպից և այլ կազմակերպություններից ստացված ազգագրական ժողովածուների մեջ տեղ էին գտել ձեռքի դազգահով գործած կտորեղենի և այլ գործվածքների բազմաթիվ նմուշներ (սփռոցներ, սրբիչներ, գորգեր, կապերտներ և այլն)։ Թանգարանի ազգագրական բաժինը վարչական մարմիններից ստացել էր գործածությունից դուրս եկած հրազենի և սառը զենքերի բազմաթիվ օրինակներ։

Հնագիտական բաժինը ևս արագ թափով մեծացավ՝ շնորհիվ թանգարան բերված մի քանի հավաքածուների։ Դամբարանային բազմաթիվ առարկաներ կային Ե. Լալայանի Թբիլիսիից բերած ժողովածուների մեջ, որ հայտնաբերվել էին Սևանա լճի ափերին և Հայաստանի այլ վայրերում նրա կատարած պեղումներից։ 1926 թ. հնագիտական բաժինը Սանահնի վանքից ստացավ Ն. Մառի Անիում պեղած նյութերի այն մասը, որը հաջողվել էր կորստից փրկել թուրքական զորքերի առաջխաղացման ժամանակ։ Այդ ժողովածուն թեև Անիի հնադարանի մի չնչին մասն էր կազմում, բայց թանգարանի հնագիտական բաժինը զգալի չափով հարստացրեց միջնադարյան առարկաներով։ Ժողովածուն ունի 1621 առարկա և 1803 դրամ։

1929 թ. Վաղարշապատի պետական թանգարանը լուծարքի ենթարկվեց և նրա ժողովածուները հանձնվեցին Հայաստանի կենտրոնական թանգարանին. հնագիտական բաժինը ստացավ 872 առարկա և 2200 դրամ։

1923 թ. դեկտեմբերի 18-ին Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի հատուկ դեկրետով լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ցանցում հիմնվեց Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, որը ոչ միայն զբաղվեց Հայաստանի հնագիտական ու պատմա-ճարտարապետական հուշարձանների պահպանության խնդիրներով, այլև լծակից դարձավ թանգարանի հնագիտական աշխատանքներին։ Կոմիտեն Հայաստանի բոլոր գավառներում, գավառամասերում և գյուղերում ուներ իր ներկայացուցիչները (լիազորներ, հրսկիչներ, պահակներ), որոնք նրան տեղյակ էին պահում հողային աշխատանքների միջոցին բացված հնագիտական նյութերի մասին։ Այդպիսի դեպքերում նա իր մասնագետներին անմիջապես ուղարկում էր պեղումներ կատարելու և ի հայտ եկած նյութերը Երևան տեղափոխելու համար։ Հողային աշխատանքների ընթացքում պատահականորեն բացված հուշարձանների պեղումները 20-ական թվականների վերջերին կատարում էին Աշխ. Քալանթարը, Ասատուր Խաչատրյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, իսկ 30-ական թվականներին նաև Եվգենի Բայրուրդյանը և տողերիս հեղինակը։

1930 թ. նոյեմբերին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 10-ամյակի առթիվ, հնությունների պահպանության կոմիտեն իր շենքում բաց արեց ձեռք բերած գրեթե բոլոր նյութերի ցուցահանդես, իսկ 1931 թ. վերջին կոմիտեն վերակառուցվեց, բոլոր հավաքած նյութերը հանձնեց թանգարանին և մտավ նորահիմն Նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի կազմի մեջ։

Այսպիսով, թանգարանն իր գոյության առաջին շրջանում զգալի չափով հարստացրեց հնագիտական և ազգագրական բաժինների իր ժողովածուները։ Սակայն դրանց գիտական արժեքը, ինչպես ասացինք, բարձր չէր։

Թանգարանային արժեքների կենտրոնացմանը և նոր իրեր ձեռք բերելու միջոցառումներին զուգահեռ թանգարանի գլխավոր հոգսերից մեկն էլ ցուցադրության կազմակերպումն էր և իր դռները ժողովրդի առաջ լայն բաց անելու խնդիրը, հին մշակույթի հուշարձանները աշխատավոր ժողովրդի սեփականություն դարձնելը։ Դա այն պահանջն էր, որ սովետական իշխանությունը 20-ական թվականներին դնում էր իր երկրի թանգարանների առջև։

Հայաստանի կենտրոնական թանգարանի անդրանիկ ցուցադրությունը տեղի ունեցավ 1925 թ. նոյեմբերին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձի տոնակատարության օրերին։ Այդ ցուցահանդեսով թանգարանն առաջին անգամ ներկայացավ ժողովրդին։ Թանգարանն ուներ սակավաթիվ, բայց ակնավոր գիտնական աշխատողներ, ինչպիսիք էին՝ հնագիտության և ազգագրության բաժինների վարիչ Երվանդ Լալայանը, պատմագրական բաժնի վարիչ Երվանդ Շահազիզը, գեղարվեստական բաժնի վարիչ Ռուբեն Դրամբյանը (որ այդ տարին նոր էր եկել Լենինգրադից), սակայն նրանցից ոչ մեկը ցուցահանդես կազմակերպելու փորձ չուներ։ Բացի այդ, թանգարանը չուներ ցուցադրության համար համապատասխան կահույք և տարածություն։

1925 թ. բացված ցուցահանդեսն իր ծավալով մեծ չէր, բայց մասնակցում էին թանգարանի բոլոր չորս բաժիններն առանձին-առանձին, իրենց հատկացված տարածությունների սահմաններում։

Մեծ շտապողականությամբ կազմակերպված այդ ցուցահանդեսում չկային պատմական ֆորմացիաներ, դարաշրջանների բաժանումներ կամ առանձին երևույթների նվիրված մասեր։ Թանգարանի ամեն մի բաժին աշխատել էր իր ունեցած առարկաների լավագույն նմուշները ցույց տալ ժողովրդին։ Հնագետները ցուցադրել էին պեղածո նյութեր։ Այդ բաժնում առանձնապես աչքի էր ընկնում Մշո Առաքելոց վանքի քանդակազարդ դուռը։ Ազգագրական բաժնում տեղ էին գտել տարբեր վայրերի տարազային զգեստները և արծաթյա զարդեղենները։ Աշխատանքի գործիքներ կամ զբաղմունքի վերաբերյալ նյութեր գրեթե չկային։ Պատմագրական բաժինը հրապարակ էր հանել հայ գրողների ձեռագիր, տպագիր երկերը և մագաղաթյա գրչագրերն իրենց ծաղկուն էջերով։ Գեղարվեստի բաժինը ներկայացրել էր հայ նկարիչների բազմաթիվ գործեր։

Թանգարանի առաջին ցուցահանդեսն ունեցավ մեծ հաջողություն և այցելուների վրա թողեց խոր տպավորություն։ Առաջին անգամ հայ ժողովրդի զավակները զգացին, որ իրենք պատկանում են մի ժողովրդի, որը դարերի ընթացքում մշակույթ է ստեղծել և այդ մշակույթն իր ազգային ոճն ու ձևերն ունի։ Ցուցահանդեսը որոշ փոփոխություններով պահպանվեց մինչև 1930 թ.։

Նման ցուցահանդես, մի քիչ ավելի մեծ ծավալով և ավելի խնամքով ձևավորված, բացվեց 1930 թ., Հայաստանում սովետական կարգերի հաստատման 10-ամյակի առթիվ։ Իր էությամբ այս ցուցահանդեսը ոչնչով չէր տարբերվում նախորդից։ Այստեղ էլ թանգարանի բաժինները պարզապես ցուցադրել էին իրենց ունեցածի լավագույն նմուշները։ Հիմնական նշանաբանը դարձյալ նույնն էր՝ ժողովրդին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի դարավոր արվեստի ու մշակույթի գանձերին։

Թանգարանի առաջին երկու ցուցահանդեսները գաղափարական առումով բարձր մակարդակի վրա չէին գտնվում (չկային դարաշրջանային բաժանումներ, պատմական-հասարակական ֆորմացիաներ և այլն)։

Հայաստանի կենտրոնական թանգարանն իր գոյության սկզբից մինչև 1924—1925 տնտեսական տարվա վերջը առանձին բյուջե չուներ և իր ծախսերը կատարում էր Լուսժողկոմատի կենտրոնական մարմնի հաշվին։

1925—1926 թթ. թանգարանն ունեցավ առանձին բյուջե և ճանաչվեց իբրև բյուջետային ինքնուրույն հիմնարկություն։

Մասնագետների պակասը խիստ զգալի էր, և 1927 թ. աշխատանքի հրավիրվեց Մոսկվայի համալսարանի հնագիտական ֆակուլտետի շրջանավարտ Եվգենի Բայբուրդյանը։ Նա աշակերտել էր Ռուսաստանի հին մշակույթի ականավոր մասնագետ Վ. Գորոդցովին, բայց Հայաստանի պատմությանը լավատեղյակ չէր։ Այնուամենայնիվ, Բայբուրդյանը օգտակար աշխատանք կատարեց ոչ միայն հնագիտական բաժնի ցուցադրությունները կազմակերպելու ընթացքում, այլև կարևոր պեղումներ կատարեց Շենգավիթում, Մուխանաթ թափայում և մի քանի այլ հնավայրերում։

1930 թ. Թորամանյանի նախաձեռնությամբ թանգարանում հիմնադրվեց հայ ճարտարապետության բաժին, որի վարիչը դարձավ ինքը՝ Թ. Թորամանյանը[9]։ Նա իր կարճատև աշխատանքի ընթացքում խիստ արդյունավետ գործ կատարեց։ Նորահիմն բաժնում նա աշխատանքի հրավիրեց նկարչուհի Անուշ Սադինյանին և վերջինիս օգնությամբ կատարեց մի խումբ ճարտարապետական հուշարձանների չափագրություններ։

1928 թ. թանգարանի ազգագրական բաժնի վարիչ նշանակվեց Ստ. Լիսիցյանը, որը այդ պաշտոնում մնաց մինչև իր կյանքի վերջը (1947 թ.) և զգալի թարմություն մտցրեց բաժնի ցուցադրության և գիտահետազոտական աշխատանքների մեջ։

Ահա այսպիսին էր թանգարանի վիճակը մինչև 1930 թ. վերջը և հաջորդ տարվա առաջին կեսը, երբ նրա կյանքում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ՝ կապված 1930 թ. Մոսկվայում հրավիրված թանգարանային աշխատողների առաջին համագումարի որոշումների հետ։

Համագումարը նշեց թանգարանային գործի անբավարար վիճակը և կոչ արեց Սովետական Միության բոլոր թանգարաններին, հենվելով մարքսիզմ-լենինիզմի տեսության վրա, վերակառուցել իրենց աշխատանքները, վճռական պայքար մղել գաղափարազրկության, կղերա-ավատական, իդեալիստական և բուրժուական այլ գաղափարախոսությունների դեմ։

Թանգարանային առաջին համամիութենական համագումարի հետևանքն այն եղավ, որ ՀՍԽՀ Լուսժողկոմատի կոլեգիան 1931 թ. քննության առավ այդ հարցը լայն առումով։ Քննարկվեցին մեթոդական խնդիրներ և վարչական կառուցվածքային հարցեր։ Կոլեգիայում նշվեց, որ Հայաստանի կենտրոնական թանգարանի աշխատանքը հեռու է բավարար լինելուց և առաջարկվեց Լուսժողկոմատի գիտության բաժնին՝ վերակառուցել թանգարանի աշխատանքները և վերացնել թերությունները։

---

9 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 281—282։

Լուսժողկոմատի կոլեգիայի նիստին հաջորդեցին նույն ժողկոմատի գիտության և բուհերի բաժնում հրավիրված խորհրդակցությունները։

Ի վերջո՝ Լուսժողկոմատն ընդունեց հետևյալ որոշումները.

ա) Հայաստանի պետական կենտրոնական թանգարանը վերանվանվեց Հայաստանի պետական կուլտուր-պատմական թանգարան։

բ) Թանգարանի ընդհանուր վարիչին փոխարինելու էր դիրեկտորը՝ միանձնյա ղեկավարի իրավունքով։

գ) Թանգարանի բոլոր բաժիններում ցուցադրությունները կազմակերպվելու էին ըստ հասարակական ֆորմացիաների։ Բացառություն էր կազմելու գեղարվեստական բաժինը, որի ցուցադրությունը պետք է ունենար երեք ենթաբաժին՝ հայկական, ռուսական և արևմտաեվրոպական։

Ապա սկսվեց թանգարանային իրերի հավաքածուների զտումը, որով դեռ Լուսժողկոմատի որոշումից առաջ էլ զբաղվել էին թանգարանի գրեթե բոլոր բաժինները։ Այսպիսով, թանգարանը ազատագրվեց ավելորդ գույքից և բարձրացրեց իր ունեցածի արժեքը։ Այս բոլորից հետո միայն հնարավոր եղավ որոշել, թե թանգարանը հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ինչ նյութեր ունի և ինչ ուղղությամբ է ծավալելու իր որոնումները՝ չունեցածը ձեռք բերելու համար։

1931 թ. վերջերին Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանը սկսեց նախապատրաստվել նոր ցուցադրության։ Ցուցահանդեսը կազմակերպվելու էր 1930 թ. Մոսկովյան համագումարի որոշումների հիման վրա. նրանում արտահայտություն պետք է գտնեին հասարակական կացութաձևերը՝ մարդու ծագումից սկսած մինչև ավատական կարգերն ու բուրժուական իրավակարգը։ Ցուցահանդեսին մասնակցեցին թանգարանի բոլոր չորս բաժինները՝ հնագիտականը իր դրամագիտական և ճարտարապետական ենթաբաժիններով, ազգագրականը, գրականը և գեղարվեստականը։ Գեղարվեստականը, որ ուներ երեք ենթաբաժին՝ արևմտաեվրոպական, ռուսական և հայկական, ինչպես ասացինք, սոցիալ-տնտեսական պատմության հետ առնչություն չուներ։ Գրականը պետք է ներկայացներ հայ հեղինակների բնութագրեր և նշեր յուրաքանչյուրի աշխարհայացքն ու գրական ուղղությունը։ Հարցի գլխավոր ծանրությունը ընկնում էր ազգագրական և մանավանդ հնագիտական բաժինների վրա։

Այստեղ դժվարությունը ոչ միայն այն էր, որ առաջին անգամ ցուցադրվելու էին պատմական դարաշրջաններն իրենց բնորոշ գծերով, այլև այն, որ թանգարանը մինչ այդ, նյութեր հավաքելու ուղղությամբ, ծրագրված աշխատանք չէր տարել և նրա ժողովածուների մեջ շատ դարաշրջանների վերաբերյալ առարկաներ չկային։ Այսպես, օրինակ, թանգարանը գրեթե ոչ մի առարկա չուներ մարդու ծագման և հին ու նոր քարեդարի վերաբերյալ, որոնցով պետք է սկսեր իր նոր ցուցադրությունը։ Հայաստանում այն ժամանակ հայտնի էր միայն Ծակ դը Մորդանի ուսումնասիրած Բողուտլու (Արտին) լեռան քարեդարյան կայանը, բայց այնտեղի առարկաներից և ոչ մեկը Հայաստանում չէր։ Այդ պատճառով թանգարանի աշխատողները Լենինգրադի Էրմիտաժի պատճենահանության արհեստանոցից ստացան կապիկի մարդացման ընթացքին վերաբերող գիպսե ձուլածո առարկաներ, իսկ Անգլիայից պրոֆ. Կրաֆորդը ուղարկեց հին քարեդարյան գործիքների գիպսե պատճենների մի փոքրիկ ժողովածու։ Այս գիպսի ձուլածո առարկաների հիման վրա, որոնք ոչ մի առն-

չություն չունեին Հայաստանի հետ, ձևավորվեց նախնադարի բաժինը։ Պատճենների հետ միասին պատերից կախվեցին բացատրագրեր և ցուցատախտակներ։

Հաջորդ ենթաբաժինն ընդգրկում էր տոհմատիրական կարգերի պատմությունն սկզբից մինչև նրա քայքայումը։ Այս ժամանակաշրջանի համար թանգարանը ցուցադրական առատ նյութ ուներ։ Դամբարանային պեղածո առարկաների մեծ մասն այդ դարաշրջանին էր վերաբերում՝ քարի դարից մինչև Ուրարտու, բրոնզի դարն ամբողջությամբ կամ V հազարամյակից մինչև մ. թ. ա. II հազարամյակի վերջը։

Տոհմատիրական կարգերի ենթաբաժնում տեղ գտան Ե. Լալայանի Սևանա լճի ափերին պեղած դամբարանների հարուստ նյութը, ինչպես նաև Ա. Խաչատրյանի՝ Գոլովինոյում և Սեն. Տեր-Հակոբյանի Աղվեսաձորում (Աշտարակի շրջան) պեղած նյութերը և շատ այլ առարկաներ։

Ստրկատիրության ենթաբաժնում ցուցադրված էին մի խումբ ուրարտական փոքրածավալ սեպագիր արձանագրություններ և մի շարք ուրարտական պեղածո առարկաների նկարներ, որոնք վերցված էին Լեհման Հաուպտի երկհատոր գրքից[10]։

Այն ժամանակ Սովետական Հայաստանում դեռևս հայտնի չէին Կարմիր բլուրը, Արին բերդը և ուսումնասիրված չէին ուրարտական մյուս հնավայրերը, հետևապես և թանգարանն ուրարտական շրջանին պատկանող պեղածո առարկաներ դեռևս չուներ։ Աքեմենյան շրջանը ցուցահանդեսում ներկայացված էր Պերսեպոլյան պալատի մի քանի նկարների պատճեններով, որոնք վերաբերում էին արմենոներին (գերի ընկած և նվերներ տանող արմեններ և այլն)։

Սելևկյան և հունա-հռոմեական ժամանակաշրջանները ներկայացված էին հայկական, հունական, հռոմեական և այլ երկրների դրամներով, հունարեն և լատիներեն արձանագրություններով, Վաղարշապատի դամբարաններում գտնված ապակե սրվակներով և տերակոտե արձանիկներով։ Այդ նույն բաժնում ցուցադրված էին նաև կարասյա թաղումը և Հռիփսիմեի վանքի շրջապատում գտնված կավե սովորական և կոշկաձև դագաղները։ Պատերից կախված էին Գառնիի տաճարի ավերակների և Տիգրանակերտի նկարները։

Աղքատ էր ու միակողմանի միջնադարի ենթաբաժինը։ Այդտեղ համեմատաբար լավ էին ներկայացված փայտե փորագրության նմուշները՝ Մշո Առաքելոց վանքի կենդանազարդ և Սևանա վանքի զույգ դռները, Սևանա վանքի ժամատան փայտե չորս խոյակները։ Նույն ենթաբաժնում տեղ էին գտել նաև բազմաթիվ դրամներ՝ սասանյան, բյուզանդական, արաբական, կիլիկյան հայկական, սելջուկյան, մոնղոլական և ավելի ուշ ժամանակների արևմտաեվրոպական։ Պատերից կախված էին ճարտարապետական հուշարձանների Թորամանյանի կատարած չափագրությունները։ Ցուցասեղաններին դրված էին մանրանկարներով զարդարված ձեռագիր գրքեր։ Պեղածո իրեր գրեթե չկային, եթե հաշվի չառնենք պատահականորեն գտնված մի քանի սնդկամաններն ու ջնարակած և հասարակ խեցանոթները, որոնք թանգարանը ձեռք էր բերել Հայաստանի տարբեր վայրերից[11]։

---

[10] Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Bd. I, 1910, Bd. II, 1926, Berlin.

[11] Թանգարանը Անիի պեղածո իրերը Սանահնի վանքից ստացավ 1926 թ., բայց 1930 թ. բոլորն ուղարկեց Երևան՝ ժամանակավորապես այնտեղ ցուցադրելու և իրերի մի մասը վե-

Սրանով վերջանում էր հնագիտական բաժնի այդ ժամանակվա ցուցադրությունը։ Սակայն հետագա մի քանի տարիների ընթացքում այդ ցուցադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվեցին, որոնք զգալի կերպով բարձրացրին նրա արժեքը և հնարավոր չափով վերացրին թերությունները։

Կարևոր փոփոխություններից մեկը վերաբերում էր քարե դարին։ 1933 թ. Արզնիի բարձրավանդակում գտնվեցին վանակատե (օբսիդիանե) ձեռքի մի քանի հատիչներ՝ հին քարեդարյան բնորոշ հատկանիշներով։ Ցուցադրությունից հանվեցին անդրիական պատճենները և նրանց տեղում դրվեցին Արզնիում գտնված իսկականները։

1931 թ. ազգագրական բաժինը ևս կազմակերպեց իր ցուցահանդեսը, բայց մի փոքր այլ բնույթի։ Մինչև 1927 թ. վերջը ազգագրական բաժնի ցուցադրության սկզբունքը նյութն էր, այն, թե ինչ նյութից և ինչպես էր պատրաստված առարկան։ Ցուցահանդեսներում զենքի և զրահի հետ միասին առանձին խմբերով դրված էին լինում մետաղե առարկաները, փայտե իրեր, կավե շինվածքներ, մանվածքից պատրաստված գործվածքներ և այլն։ Ցուցադրվում էին նաև զգեստավորված խրտվիլակներ, զարդեղեն և ասեղնագործություններ։

Հետագայում, երբ Ստ. Լիսիցյանը փոխարինեց Ե. Լալայանին, զգալի փոփոխություններ մտցրեց ազգագրական բաժնի ցուցադրության մեջ։ 1931 թ. նա գիտական արշավանք կազմակերպեց դեպի Սիսիանի և Գորիսի շրջանները՝ ցուցադրության և ուսումնասիրության համար պակասող նյութեր ձեռք բերելու նպատակով։ Եվ ահա 1931 թ. վերջին թանգարանի ազգագրական բաժնում բացվեց հաշվետու ցուցահանդես։ Հաջորդ՝ 1932 թ., նա Ղափանի և Մեղրու շրջաններից բերած նյութերով լրացրեց նախորդ տարվա հաշվետու ցուցահանդեսը, այն դարձրեց մշտական գործող և կոչեց Զանգեզուրի գավառի ազգագրական ցուցահանդես։ Հասարակության համար ցուցահանդեսը բացվեց 1934 թ. և գրեթե անփոփոխ մնաց մինչև 1940 թ.։

Հնագիտության բաժնում ևս անհրաժեշտ էր փոփոխություն մտցնել, և Հայաստանի տարբեր դարաշրջանների մշակույթը ներկայացնել ծրագրված պեղումների միջոցով հայտնաբերված առարկաներով։ 30-ական թթ. հնագիտական աշխատանքներում թանգարանն այլևս մենակ չէր։ 1932 թ. ապրիլին հիմնադրվեց ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտը, 1935 թ.՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը, որի կազմում հաջորդ՝ 1936 թ. ստեղծվեց հնագիտության բաժին՝ ղեկավարությամբ պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյանի։ Այդ երկու հաստատությունները և թանգարանը միասին սկսեցին պեղումներ կատարել Հայաստանի հնավայրերում և հաճախ իրենց կազմի մեջ ներգրավել Լենինգրադի Էրմիտաժից հրավիրված մասնագետների (Հ. Օրբելի, Ն. Տոկարևի, Բ. Պիոտրովսկի, Ա. Հաչյան)։ Պեղումները թանգարանը հարստացրին լիարժեք առարկաներով։

Թանգարանի հետագա զարգացումը ապահովելու նպատակով 1935 թ. մայիսի 10-ին, Լուսժողկոմի հրամանով այն բաժանվեց երեք ինքնուրույն թանգարանների։ Գեղարվեստական բաժինը դարձավ ՀԽՍՀ կերպարվեստի թանգարան (այժմ ՀՍՍՀ պատկերասրահ), գրական բաժինը՝ ՀԽՍՀ գրական

բանորդելու համար։ Ժողովածուն էրմիտաժից վերստացվեց միայն 1933 թ., այդ պատճառով էլ 1931 թ. չցուցադրվեց։

թանգարան, հնագիտական և ազգագրական բաժինները միասին վերածվեցին ՀԽՍՀ պատմության պետական թանգարանի[12]։

Եվ իրոք, այդ բաժանումը Հայաստանի թանգարանների զարգացման համար ունեցավ կարևոր նշանակություն։ Անհամեմատ ավելացան թանգարանների դրամական հատկացումները և հաստիքային միավորների թիվը։ Ամեն մի թանգարան իր զարգացումը շարունակեց սեփական ուղիով։

Այսօր Սովետական Հայաստանում 40-ից ավելի մեծ և փոքր թանգարաններ կան, որոնց թիվը հետզհետե մեծանում է, բայց մեր հանրապետության առաջին թանգարանից սերված՝ պատմության պետական թանգարանը, պետական պատկերասրահը և Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը բացառիկ տեղ են գրավում, քանի որ դրանք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հետ միասին հայ ժողովրդի դարավոր մշակույթի հարուստ շտեմարաններն են։

ПЕРВЫЙ МУЗЕЙ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

К. Г. КАФАДАРЯН

Доктор исторических наук

Резюме

До установления Советской власти в Армении не было ни одного музея (кроме Эчмиадзинского церковного музея).

В октябре 1921 г. в Ереване был организован Комитет по охране древностей и памятников искусства, главной задачей которого было приобретение предметов для будущего музея. В 1922 г. уже официально был создан музей, который первоначально назывался Центральным музеем Армении, а впоследствии — Культурно-историческим музеем Армении. Первая временная экспозиция музея вноябре 1925 г. была посвящена 8-летию Великой Октябрьской социалистической революции и 5-летию установления Советской власти в Армении. Целью выставки было донести до широких трудящихся масс многовековую культуру армянского народа.

В середине 1935 г. Культурно-исторический музей был разбит на три самостоятельных музея: Государственный исторический музей, Картинную галерею, Музей литературы и искусств им. Е. Чаренца.

Существующие ныне в Армении более сорока музеев генетически связаны с первым музеем Армении.

---

12 Հետագայում գրական թանգարանին միացավ թատերականը, ինչպես նաև Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական կաբինետը և կազմավորվեց Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը։